# ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ԼՈՒՐԵՐ

***Մարտի 2-ին, կիրակի.- Բուն Բարեկենդան:***

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Արշեն աբղ. Սանոսյանը: «Հայր մեր»-ից առաջ Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանը «Քանզի զԱստուած տեսանէր միշտ խոնարհեալ ի դրախտին» (Շարակնոց) բնաբանով քարոզ խոսեց (տե՛ս էջ 70):

***Մարտի 9-ին, կիրակի.- Բ. կիրակի Քառասնորդական Պահոց (Արտաքսման):***

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Գնել աբղ. Սողոմոնյանը: «Հայր մեր»-ից առաջ Տ. Աղան արքեպս. Պալիոզյանը «Մի՛ համարիք եթէ եկի լուծանել զօրէնս կամ զմարգարէս, ոչ եկի լուծանել, այլ լնուլ» (Մատթ. Ե 17) բնաբանով քարոզ խոսեց (տե՛ս էջ 72):

Հավարտ Սուրբ և անմահ Պատարագի Վեհափառ Հայրապետի հանդիսապետությամբ կատարվեց Հոգեհանգստյան պաշտոն՝ Կոստանդնուպոլսի Երանաշնորհ Պատրիարք Տ. Շնորհք արքեպս. Տերտերյանի հոգու խաղաղության համար:

***Մարտի 16-ին, կիրակի.- Գ. կիրակի Քառասնորդական Պահոց (Անառակին):***

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Գեղարդ աբղ. Վահունին: «Հայր մեր»-ից առաջ Տ. Արսեն արքեպս. Բերբերյանը հավուր պատշաճի քարոզ խոսեց (տե՛ս էջ 75):

Հավարտ Սուրբ և անմահ Պատարագի կատարվեց Հոգեհանգստյան պաշտոն:

***Մարտի 23-ին, կիրակի.- Դ. կիրակի Քառասնորդական Պահոց (Տնտեսին):***

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Արտակ վրդ. Տիգրանյանը: «Հայր մեր»-ից առաջ Տ. Փառեն եպս. Ավետիքյանը «Ջի շնորհօք նորա էք փրկեալք ի ձեռն հաւատոցն...» (Եփես. Բ 8) բնաբանով քարոզ խոսեց:

***Մարտի 30-ին, կիրակի.- Ե. կիրակի Քառասնորդական Պահոց (Դատաւորին):***

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա Ս. Պատարագ մատուցեց Տ. Թորգոմ աբղ. Տոնիկյանը: «Հայր մեր»-ից առաջ Տ. Տաթև արքեպս. Սարգսյանը հավուր պատշաճի քարոզ խոսեց (տե՛ս էջ 78):

Ս. Պատարագի ավարտին Վեհափառ Հայրապետի հանդիսապետությամբ կատարվեց Հոգեհանգստյան պաշտոն:

*Ապրիլի 5-ին, շաբաթ.- ԼԴ. օր Մեծի Պահոց: Տօն է Սրբոյն Գրիգորի Լուսաւորչին մերոյ առնկալի չարչարանացն եւ մտին ի Վիրապն:*

Այսօր Մայր Տաճարում, Իջման Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Արտակ վրդ. Տիգրանյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը հավուր պատշաճի քարոզ խոսեց:

*Ապրիլի 6-ին, կիրակի.- Զ. կիրակի Քառասնորդական Պահոց (Գալստեան):*

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Ղևոնդ աբղ. Ղևոնդյանը: «Հայր մեր»-ից առաջ Տ. Մեսրոպ արքեպս. Աշճյանը « Ո՛վ մեր հայրը և Լուսավորիչը մեր հոգիներու» բնաբանով քարոզ խոսեց (տե՛ս էջ 81):

*Ապրիլի 7-ին, երկուշաբթի.- ԱՒԵՏՈՒՄՆ ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ:*

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Խորեն աբղ. Ջաքարյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը «Փառք Քեզ, Աստուած, փառք Քեզ, յաղագս ամենայնի, Տէր, փառք Քեզ» (Ժամագիրք) բնաբանով քարոզ խոսեց (տե՛ս էջ 87):

*Ապրիլի 12-ին, շաբաթ.- ԽԱ. օր Մեծի Պահոց: Յիշատակ Յարութեան Ղազարու:*

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Եղիշե աբղ. Ավետիսյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը հավուր պատշաճի քարոզ խոսեց:

*Ապրիլի 13-ին, կիրակի.- Ծաղկազարդ: Պահք:*

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Հուսիկ արքեպս. Սանթուրյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Սրբազան Հայրը «...Ովսաննա, օրհնեալ որ գասդ յանուն Տեառն՝ թագաւորդ Իսրայէլի» (Հովհ. ԺԲ 13) բնաբանով քարոզ խոսեց:

Հավարտ Ս. Պատարագի Վեհափառ Հայրապետի հանդիսապետությամբ կատարվեց մանուկների օրհնություն:

*Ապրիլի 17-ին, Աւագ հինգշաբթի.- Պահք: Յիշատակ ընթրեաց Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի:*

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Կորյուն աբղ. Առաքելյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբն ընթերցեց Ս. Բարսեղ Կեսարացու Ճառը ի լուր հավատացյալ ժողովրդի:

Ս. Պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

*Ապրիլի 19-ին, Աւագ շաբաթ.- Պահք: Ճրագալոյց Զատկի:*

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Արսեն արքեպս. Բերբերյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Սրբազան Հայրը «Գոհութիւն և փառք Քեզ, հարուցյալ Տեր» բնաբանով քարոզ խոսեց:

Ս. Պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

*Ապրիլի 20-ին, կիրակի.- ԶԱՏԻԿ: Յարութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի:*

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը: «Հայր մեր»-ից առաջ Վեհափառ Հայրապետը «Հաւատովք ճանաչել զնա, եւ զզօրութիւն յարութեան նորա» (Փիլիպ. Գ 10) բնաբանով քարոզ խոսեց (տե՛ս էջ 3):

*Ապրիլի 21-ին, երկուշաբթի.- Բ. օր Զատկի: ՅԻՇԱՏԱԿ ՄԵՌԵԼՈՑ:*

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Տաճատ արղ. Ծատուրյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը հավուր պատշաճի քարոզ խոսեց:

Ս. Պատարագից հետո կատարվեց Հոգեհանգստյան պաշտոն՝ վասն համորեն ննջեցելոց:

*Ապրիլի 24-ին, հինգշաբթի.- Ե. օր Զատկի:*

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Վարդան արղ. Նավասարդյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը քարոզ խոսեց Մեծ Եղեռնի 88-րդ տարելիցի առիթով (տե՛ս էջ 89):

Հավարտ Սուրբ և անմահ Պատարագի Վեհափառ Հայրապետի հանդիսապետությամբ կատարվեց Հոգեհանգստյան պաշտոն՝ ի հիշատակ Մեծ եղեռնի բյուրավոր նահատակների:

*Ապրիլի 27-ին, կիրակի,- Ը. օր Զատկի: Կրկնազատիկ (Նոր կիւրակէ):*

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Բագրատ վրդ. Գալստանյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը «Եւ Բանն մարմին եղեւ, եւ բնակեաց ի մեզ» (Յովհ. Ա 14) բնաբանով քարոզ խոսեց (տե՛ս էջ 84):

Ս. Պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը: